



ԸՂԻՔՍԸՆԴԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԸՆԹԸՅԵԸՆԲ

Սպրիլի 19-ին

ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ ՎԱԽՃԱՆՈՒԵՑ

Ահա այն լուրը, որ հեռագիրը գուժեց և ամեն նրանք, որոնք ծանօթ էին Աղէքսանդր Մանթաշեանին, որոնք բարերարուած էին նրանից և որոնք լսել էին նրա բարեգործութեան համբաւը, վշտով համակուեցին: Վշտով համակուեցին և այն դպրոցական, հասարակական և եկեղեցական հաստատութիւնները, որոնք նուիրուած են Աղէքսանդր Մանթաշեանի անուան կամ նրանից բարերարուած:

Ս. Էջմիածնի միաբանութիւնը, որպէս եկեղեցական հաստատութիւններից առաջինը, ուր կառուցուած է հայ-

բայեապատկան մեծաշէն Վեհարանը, և պէտք է վերանորոգուի Մայր Տաճարը Աղէքսանդր Մանթաշեանի լիաձեռն նուիրարեւութեամբ, ստանալով իւր հարազատ սրբու մահուան բօթը, ի դէմս Ամենապատիւ Տեղակալի, յայտնեց իւր խորին ցաւակցութիւնը հանդուցելոյ ժառանգներին. հանդուցելոյ յիշատակը ըստ արժանւոյն յարգելու համար Տեղակալ Սրբազանի կարգադրութեամբ առաջին հոգեհանդիսարը կատարուեց Մայր Տաճարում կիւրակէ, ապրիլի 24-ին Ս. Պատարազից յետոյ, որ մատոյց Սինսօզի անդամ Տ. Մաթէոս վարդապետը, երկրորդ հանդիսաւոր հոգեհանդիսար՝ թաղման օրը նոյն ապրիլի 30-ին, ս. պատարազից յետոյ, որ մատոյց Տ. Աշոտ եպիսկոպոսը Ամենապատիւ Տ. Տեղակալը իւր և միաբանութեան կողմից ներկայացուցիչ ուղարկեց Տփլիս Սինսօզի անդամ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին, յանձնարարելով ներկայ լինել յուղարկաւորութեանը և թաղմանը և ս. պատարազը մատուցանել հանդուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի յիշատակի համար:

Կովկասի հայ և օտար հրատարակութիւնները լի են հանդուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի յիշատակին և բարեգործութիւններին վերաբերեալ յօդուածներով:

«Հորիզոն»ում (№ 82.) պ. Շիրվանզադէն գրում է.

### ԻՍԿԱԿԱՆ ԲՍԲԵՐԱՐԸ

«Այն կորուստը, որ կրում է այսօր հայ ժողովուրդը Մանթաշեանի մահուամբ, անփոխարինելի է:

Մեծ բարերարները դարերի ծնունդ են:

Պուժարները ահադին քանակութիւնները չեն, որ այնպէս առատաձեռնօրէն հանդուցեալը զոհում էր Բարեգործութիւն կոչուած օրջազան տաճարին, որ երկրային տաճարներէ թաղուհին է:

Սերտը—ահա դիտաւորը, որ կատարում էր միակ դերը և վեճ դերը Մանթաշեանի բարերարութիւնների մէջ:

Նա տալիս էր առանց յետին հաշիւների, առանց սինփառամտութեան:

Տալիս էր, օրովհետեւ այդպէս էր թելադրում նրա զգայուն հոգին:

Նա չէր հարողանում սառնասիրտ անցնել հարկի մօտով և հարկը, զգալով այդ, նրան էր դիմում: Ամենից առաջ նրան: Երկրի բոլոր անկիւններից, աշխարհի բոլոր վայրերից, սուր միայն հային մի բուռն հայեր:

Նա այն կեղծ բարեգործներից չէր, որոնք փողոցների քառանկիւններում թմբկահարում են իրանց արածների մասին և չուր աշխարհի: Որոնք իրանց բարի գործերի մէջ սքսկում են այնպիսի չարութիւն, որ երբեմն իբրև սոսկալի թոյն բարոյապէս մեռցնում է բարեբարւոյններին:

Նրա բարեբարութիւնը կրում էր բուն քրիստոնէութեան դրոշմ — աւէր այնպէս, որ աջ ձեռք տալիս ձախը չիմանայ:

Դա նրա համեմատութիւնն էր, մի զարդ, որ այնքան հաղաւթիւն է:

Հրատարակորէն յայտնի է նրա արած բարի գործերի հաղիւ մի մասը: Անթիւ, անհամար են անյայտները, որոնց մասին գուցէ միայն նրա մերձաւորները գիտէին:

Նա տալիս էր ամենքին, ով դիմում էր նրան:

Տալիս էր առանց խտրութեան, առանց հաւատարմանութեան: Տալիս էր՝ որովհետև դա նրա հոգու պահանջն էր, որտեղ հարկը: Եւ երբ չէր տալիս — ախրում էր:

Մնչպէս բանաստեղծն իր երկը յօրինելիս չգիտէ՝ ով պիտի հարդայ այն, ինչպէս երաժիշտը նուագելիս՝ չի հոգում, թէ ովքեր են լսողները, նոյնպէս Մանթաշեանը յաճախ սրիւնում էր իր բարիքներն աջ ու ձախ առանց հաշիւի:

Այս է իսկահան բարեգործութիւնը և այս է պատճառը, որ մեծ բարեգործի մահը այսօր քնդհանուր սուգ է պատճառում ամբողջ հայութեան:

Ե՛նչ փոյթ, որ մարդիկ յաճախ նրա անսահման սէրը դէպի հարկը՝ ի շարն էին գործ դնում: Ե՛նչ փոյթ, որ շատ անգամ այդ սիրուց օգտուում էին անարժանները: Երբ Մանթաշեանը լսում էր, որ օգնութիւնը տուել է այդպիսիներին, նրա ամբողջ վրդովմունքը արտայայտուում էր միայն մի սուր խօսքով:

Արտասանում էր նա այդ սուր խօսքը ժպտալով և անմիջապէս մոռանում անարժանին:

Ազգին է մ'նում այժմ իր խորին երախտագիտութեամբ դնահատել այդպիսի սիրտ: Եւ նա անշուշտ կը դնահատի, ու շատ բարձր կը դնահատի իր ասպագայ պատմութեան մէջ»:

Սուրհանդակում (№ 286) պ. Աստ. Եր. ասում է.

«Հեռագիրը գուժեց, որ ամսոյս 19-ին Պետերբուրգում վախճանուել է յայտնի ազգային բարերար Ալէքսանդր Մանթաշեանը:

Պատկառելի հասակը (69 տարեկան), բարդ ու երկարատե հիւանդութիւնը վերջ տուին մի իսկահան և ամեն կողմից հաւասարակշռուած հայ մարդու կեանքին. մի կեանք, որ քանի ապրում էր, այնքան աւելի սիրելի, այնքան աւել յարգելի, այնքան աւելի օգտակար ու գնահատելի էր դառնում:

Յանձին Մանթաշեանի այսօր հայ ազգը կօրցնում է իր խոշոր բարեգործներից ամենաառաջինին:

Եւ երբ ի նկատ ենք առնում, թէ ինչ սիրով նա համակուած էր դէպի հայ ազգի պէտքերը, ինչպէս առատաձեռն օգնում էր նա հայկական-կուլտուրական հաստատութիւններին և թէ դեռ էլի որչափ պիտանի գործեր պիտի անէր նա իր թշուառ ազգի համար, եթէ մահը վրայ չհասնէր,— ահամայ խոր ցաւ ենք զգում, որ թէև ծերունի, բայց կարծես թէ դեռ ևս վաղ էր մեզ համար նրա վախճանը:

Ներսիսեան դպրոցը, որի սանն է եղել երբեմն հանդուցեալը և որի մէջ դաստիարակում են հազարաւոր հայ ազգի խեղճ մարդկանց զաւակները, այնպիսի մի կոթող է, որ յաւիտեանս անջնջելի կըկացուցանէ Մանթաշեանի յիշատակը մեր մէջ:

Հարիւրաւոր, հազարաւոր սւսանողներ, որոնք տասնեակ տարիներից ի վեր ուսում ու դիտութիւն էին ձեռք բերում Ալէքսանդր Մանթաշեանի ընձեռած միջոցներով,— ահա մի ուրիշ կոթող ևս՝ հայ արդիւնաբերողի լուսասիրութեան, գիտութեան գնահատութեան և ազգի մանկուոյն յառաջադիմութեան նախանձախնդրութեան:

Երեք տասնեակ տարիներից ի վեր՝ Ալէքսանդր Մանթաշեանի անունը մի հմայիչ անուն էր դառած մեր ազգային կեանքի բոլոր ձախորդ օրերում և նրան էին դիմում՝ ու առատաձեռն օգնութիւն ստանում նրանից թէ ընտելեան արհաւիրքների զոհերը, թէ բռնութեան ճիրաններին մատնուածները, նոյնիսկ երկրի սահմաններից դուրս և թէ մեր իսկ ձեռքով քանդուած, տրորուած ու աւերի մատնուած հայկական հին փառքի բեկորների վերաշինողները:

Այսօր արդէն այլևս չկայ այն հայը, որի սիրտը ջերմ կերպով բաբախում էր ամեն ժամանակ հայ ազգի ցաւերով ու հոգսերով և ջանում էր կարողացածին շափ ամօքել այդ ցաւերն ու հոգսերը:

Այսօր այլ ևս չկայ այն հայը, որ մանկան պէս ուրախանում էր, երբ լսում ու տեսնում էր, թէ հայկական դպրոցներ են բացւում, թերթերը շատանում են, թատրոնը ժողովրդով է լցւում:

Չկայ այլ ևս այն հայը և հարուստ հայը, որ չէր ամաչում իր հայութիւնը յայտնել օտարների առաջ, սիրում էր հայերէն խօսել, կարդալ, նոյնիսկ մտածել,—մի բան, որ այսօր և վաղուց ի վեր արհամարհուած է ոչ թէ միայն մեր հարուստների շրջաններում և ընտանիքներում առհասարակ, այլև միջին կարողութեան տէր մարդկանց, մեր ինտելիգենցիայի շերտերում անգամ և յաճախ այն մարդկանց շրջաններում, որոնք եթէ այսօր փոքր ի շատէ բարեկեցիկ կեանք են վարում, այդ էլ շնորհիւ կրկին Մանթաշեանի կարեկցութեան և առատաձեռնութեան:

Մեռաւ հայ մեկենասներից ամենամեծը և ամենաառաջինը:

Հանգիստ նրան»:

«Մշակը» (№ 81, 82, 83.) տպել է ընդարձակ կենսագրական տեղեկութիւններ Հանդուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի մասին: Այդ տեղեկութիւններից քաղում ենք հետևեալը.

Աղէքսանդր Մանթաշեանը ծնուել է Թիֆլիսում 1842 թուին, մարտի 3-ին. ուրեմն նա մեռաւ 69 տարեկան:

Բեթղեհէմի աւագ քահանայ Տէր Սամուէլը դժտութիւն ունենալով Վրաց շերակի թաղաւորի հետ, նրա վրէժխնդրութիւնից ազատուելու համար 1785-86 թուին անցնում է Պարսկաստան և այնտեղից՝ Հնդկաստան, տանելով հետը իւր 18 ամսական Անդրէաս որդուն, որ յետոյ պարսից նշանաւոր գործիչ դարձաւ Խոսրով խան-վալի-շիր (առիւծ) մականուանեալ Աայթմաղեանց. սրա քոյր Հռիփսիմէի դուստր Խորիշանի որդին է Աղէքսանդր Մանթաշեանի հայր Յովհաննէսը, որ գնում է Պարսկաստան իւր մեծ քեռու Խոսրով խան Վալիի մօտ, և այնտեղ Յովհաննէսը յայտնի է լինում Եահեան-բէկ անունով. նա ուսաց դեսպան Գրիբօեդովի սպանութեան դէպքերի ահանատես զկաններից մէկն է լինում:

Խոսրով խան—Վալիի մահից յետոյ 1858 թուին Յովհաննէս Մանթաշեանը իւր 16<sup>րդ</sup> տարեկան Աղէքսանդր որդուն հետն առած վերադառնում է Թիֆլիս. այստեղ հօր ցանկութեամբ Աղէքսանդրը շորս հինգ տարի աշակերտում է Փափաղեան Գալուստ վարդապետին: Այնուհետև 1864 թուին Աղէքսանդր

Եւր հօր հետ դնում է Թաւրիզ և պարապում մանուֆակտուրայի առևտրով: Թաւրիզից Աղէքսանդր Մանթաշեանը Եւր հօր հետ դնում է Վայպցիզ և այնտեղից էլ Վօնդոն, շարունակելով մանուֆակտուրայի առևտուրը, Անգլիայից և Գերմանիայից ապրանք բերելով Պարսկաստան: 1878 թուին հայր և որդի Մանթաշեանները տեղափոխուեցին Թիֆլիս, բնակութիւն հաստատելով Գանոյսկայա փողոցում:

1887 թուին վախճանուեց Յովհաննէս Մանթաշեանը, Եւր որդի Աղէքսանդրը մօտ 200,000 ռուբլի կարողութիւն ժառանգելով թողեց մանուֆակտուրային առևտուրը, գնաց Բաղու և այնտեղ սկսեց պարապել նաֆթային արդիւնաբերութեամբ, ուր անագին յաջողութիւն ունեցաւ Եւր մտածուած, քայքայ խիզախ, ձեռնարկութիւններով:

Իբրև հայ նա ջերմ ազգասէր էր և հաւատարիմ զաւակ մայրենի եկեղեցուն: Նա յարդում էր հայ եկեղեցական դասակարգը: Առ եկեղեցին նրա սիրոյ առհաւատչեան են Թիֆլիսի վանքի աւագ եկեղեցու վերանորոգութիւնը, հողօր Եջմիածնի Մայր Տաճարը, որի վերանորոգութեան համար յատկացրել է որոշ գումար և Փարիզի հայ եկեղեցու շինութիւնը: Աերջինիս առիթով նա ասում էր. «Պրանսիայի պէս երկրում հայերին, իբրև ազգութիւն, պահպանողը միայն եկեղեցին կարող է լինել»:

Եջմիածնում հայրապետական վեհարանի մեծածախք շէնքը վկայում է նրա յարգանքն դէպի հողևորականութիւնն ու նախանձախնդրութիւնը հողևոր պետի փառքի և պատուի համար: Նա քաջալերելով երիտասարդ հողևորականների ձրդտումն կատարելագործուելու հայադիտութեան և աստուածաբանութեան մէջ՝ մեծ յարգանք էր բնծայում հին ծերունի հողևորականներին, որոնք իրանց ուսումն ստացել էին Եջմիածնում, ասելով, որ Հայոց եկեղեցու հաւատարիմ և աւանդապահը նրանք են:

Նա ուսումնասէր էր և քաջալերում էր ուսումն ու դիտութիւնը բաղմաթիւ ուսանող որդեգիրներ պահելով միջնակարգ և բարձր դպրոցներում:—Նրա ուսումնասէր լինելու ապացոյց են ազգային շրջանակում ներսիսեան Հողևոր դպրոցի մեծակառօյց շէնքը, որի համար նա որոշել է 250,000 ռուբլի:

Նա քաջալերում էր և գեղարուեստը, տարուէ տարի որոշ գումար յատկացնելով հայ թատրոնի գոյութիւնը տեւական գործնելու համար:

Նա քացի մասնաւոր բարեգործութիւններից Կովկասի հաւ

յոց քարեգործական ընկերութեան նուիրատու հիմնադիր անդամներէց մէկն էր: Ժողովրդական աղէտներէ ժամանակ Քիֆլիսի նպաստամատոցը Յանձնաժողովին նուիրեց 10,000 ուրբի:

Նա հասարակութեան պիտանի անդամ էր և լաւ քաղաքացի, նրա քարեգործութիւնները շէնս սահմանափակում ազդային շրջանակով: Նա նպաստում էր միջազգային կրթական և հասարակական հաստատութիւններին էլ: Նա Քիֆլիսի աւելիական դպրոցի պատուաւոր հոգաբարձու էր երկար տարիներ և տարեկան որոշ նպաստ էր տալիս: Նա հիմնեց Քիֆլիսում առևտրական դպրոց, որի նոր, գեղեցիկ շինութիւնը դարձեալ նրա նպաստներով է կառուցուել:

Հանգ. Աղէքսանդր Մանթաշեանը շնայելով իւր մեծ հարստութեան շատ համեատ էր ապրում: Քիֆլիսում նա սեփական կառք չուներ և յաճախ հանրահարսով էր ման դալիս. խոյս էր տալիս աչքի ընկնող շքեղութիւններէց:

«Մշակը» Մանթաշեանի մասին իւր այս կենսագրականը վերջացնում է հետեւեալ խօսքերով.

«Անշուշտ, նա իր թողած կտակի մէջ մոռացած չի լինի նորանոր քարեգործական և ազդային նպատակներով դումարներ յատկացնել, բայց առ այժմ այդ կտակի էութիւնը անձանօթ է մնում:

«Եւ, յամենայն դէպս, հայկական քարեգործական ասպարեզից չքանում է մի մարդ, մի խոշոր դէմք, որի նմանը դուրջ երկար և երկար ժամանակ չը տայ հայ ժլատ առևտրական դասակարգը»:



Ամենայն տեղ, բոլոր ազգային հասարակական հաստատութիւններում կատարուել են Հանգ. Աղէքսանդր Մանթաշեանի համար հոգեհանդստեան պաշտօններ, և յարգանքի արտայայտութիւններ: Ամեն կողմից տեղում են ցաւակցութեան և վշտակցութեան հեռագրներ:

Հանգուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի յուղարկաւորութեան և թաղման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալը իւր և Եջմիածնի միաբանութեան կողմից ներկայացուցել է կարգեց Անօղի անդամ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին, որը ուղևորուեց Քիֆլիս և Տեղակալի յանձնարարութեան համեմատ դնաց հանգուցեալ Մանթաշեանի տունը, յանձնեց նրա ընտանիքին Տ. Տեղակալի ցաւակցութեան ու մխիթարութեան թուղթը, վշտակցութիւն յայտնեց Տ. Տեղակալի ու Ս. Եջմիածնի միաբանութեան կողմից, ներկայ եղաւ ապրիլի

29-ի երեկոյեան, տանը կատարուած, հանդիսաւոր ամբիժքին, նոյն ապրիլի 30-ին, շաբաթ օրը, հոգեւորականութեան գլուխն անցած մեծ հանդիսաւորութեամբ հանդուցելոյ մարմինը տանից յուղարկաւորեց վանքի աւագ եկեղեցին, ուր և Ս. Պատարագ մատոյց հանդուցելոյ յիշատակի համար և քարոզ խօսեց՝ թուելով հանդուցելոյ կատարած դորժերը յօգուտ հասարակութեան և Մայր Աթոռի՝ վեհարանի կառուցմամբ և Մայր տաճարի վերանորոգութեամբ, թարգման հանդիսանալով Տ. Տեղակալի և Ս. Էջմիածնի միաբանութեան երախտագիտական զգացմանը: Ս. պատարագից յետոյ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը պատարագչի զգեստով կատարեց եկեղեցու թաղման կարգը, և նոյն զգեստով յուղարկաւորեց դագաղը մինչև եկեղեցու բակում առաջին հանդիսար, որը կատարելուց յետոյ վերադարձաւ եկեղեցի զգեստը հանելու, և այնուհետև հանդուցելու դագաղի առաջ կարգացուցեցին զանազան հաստատութիւնների կողմից երախտագիտութեան ուղերձները:

Զանազան հաստատութիւններից բերուած էին բաղմաթիւ արծաթեայ և կենդանի ծաղիկների պսակներ: Իսկ հանդուցելուց բարերարուած եկեղեցիները, որոնց հետ և Ս. Էջմիածնի Մայր Աթոռը աղօթում էին և աղօթում են, որ պսակադիրն Քրիստոս ընդ սուրբս և սիրելիս դասելով եկեղեցու սիրելի զաւակ Աղէքսանդր Մանթաշեանի հոգին՝ անթառամ և անանց պսակով պսակէ. ամէն: